

ՍՈՑԻԱԼ–ԴԱՐՎԻՆԻԶՄԸ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ
ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔՈՒՄ*

Բանալի բառեր – երիտթուրքեր, սոցիալ–դարվինիզմ, «գոյության կռիվ», «ամենահարմարվածի գոյատևում», ներքին թշնամի, «զինված ազգ», Հայոց ցեղասպանություն, պատերազմ, «քաղցկեղ», բարոյականություն, բժշկական փորձարկումներ:

Մուտք

Տեսակների՝ գոյության համար նվազող հավերժական պայքարում «ամենատեղի/ամենահարմարվածի գոյատևումը» սոցիալ–դարվինիզմի առանցքային գաղափարն է: Տերմինն առաջին անգամ գործածել և հիմնավորել է անգլիացի սոցիոլոգ Հերբերտ Սպենսերը 1852 թ. հրատարակած «Բնակչության տեսություն՝ հիմնված կենդանիների բազմացման ընդհանուր օրենքի վրա» հոդվածում¹: Այստեղ նա խոսում է նաև էվոլյուցիայի մասին, բերում օրինակներ կենդանաբանությունից, դրանք մարդկային տեսակին վերագրելով՝ կատարում եզրահանգումներ:

Փիլիսոփայական հոսանքը Դարվինի անունով կոչելը պայմանավորված էր այն հանգամանքով, որ երբ 1859 թ. լույս տեսավ նրա «Տեսակների ծագումը» աշխատությունը՝ էվոլյուցիայի և «բնական ընտրության» գաղափարներով, Սպենսերի ավելի վաղ արտահայտած գաղափարները ստացան «գի-

* Հոդվածն ընդունվել է տպագրության 23.11. 2020:
1 Հերբերտ Սպենսերը (1820-1903) չուներ այն կրթությունը և գիտական հենքը, ինչ իր ժամանակակիցներ Ջ. Ս. Միլը, Չ. Դարվինը և Թ. Հաբսլին, սակայն նրա ազդեցությունը ժամանակի գիտական շրջանակների վրա անքննելի է: Կենդանության օրոք նրա գաղափարները տարածում են գտել անգամ Չինաստանում և Ճապոնիայում: Զարգանալով մեծ մասամբ ինքնակրթությամբ, գիտելիքներ ստանալով հորից, հորեղբորից և ժամանակակիցներից՝ նա ութ տարի աշխատել է որպես երկաթուղային ինժեներ, այնուհետև թողել է այդ աշխատանքը՝ գիտական գործունեությամբ զբաղվելու նպատակով: Փիլիսոփա չլինելով՝ Սպենսերը մեծ հարգանք է վայելել փիլիսոփայական շրջանակներում: Դրա վառ ապացույցն այն է, որ երբ ֆինանսական խնդիրների պատճառով դադարեցրել է «Սինթետիկ փիլիսոփայություն» գրքի աշխատանքները, դրամահավաքի համընդհանուր կոչ է արվել, որը ստորագրել են ժամանակի հայտնի գիտնականներ Թ. Հաբսլին, Չ. Դարվինը, Ջ. Միլը, Ջ. Թինդալը և այլք (տես Bouton C. W., John Stuart Mill: On Liberty and History, “The Western Political Quarterly”, 1965, Vol. 18, N 3, էջ 533, 537): Պետք է նշել նաև, որ «գոյության կռիվ» տերմինը առաջին անգամ գործածել է անգլիացի տնտեսագետ Թոմաս Մալթուսը 1803 թ. հրատարակած «Էսսե բնակչության սկզբունքի վերաբերյալ» աշխատության մեջ: Ի պաշտպանություն Սպենսերի Հաբսլին մի անգամ նշել է, որ նա, որևէ գաղափար չհայտնագործելով հանդերձ, ժամանակի ամենայուրօրինակ մտածողն է (տես Perrin G. R., Herbert Spencer’s Four Theories of Social Evolution, “American Journal of Sociology”, 1976, Vol. 81, N 6, էջ 1356):

վել համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) տարի, թիվ 4 (72), հոկտեմբեր–դեկտեմբեր, 2020

տական հիմնավորում» հանրության լայն շրջանակների համար: Ինքը՝ Դարվինը, խուսափում էր կենդանական աշխարհի և մարդկային հասարակության անալոգիայից: Դարվինի աշխատանքին ծանոթանալուց հետո Սպենսերը եզրակացրել է. «Բնական ընտրության պրոցեսը տառացիորեն ամենահարմարվածի գոյատևումն է»²: Սպենսերի և սոցիալ-դարվինիստական ուղղության մտածողների համոզմամբ՝ սոցիալական կյանքն ընթանում է գոյության կռիվ-բնական ընտրություն-ամենահարմարվածի գոյատևում բանաձևով: Չհարմարվածի կամ առավել թույլ տեսակի ոչնչացումը այս մտայնությամբ համարվում է բնական³: Սոցիալ-դարվինիզմը և՛ արդարացնում էր դարաշրջանին հատուկ ռասիզմը, և՛ սնուցվում դրանից⁴: Ռասիզմը, որը, մարդկանց խմբերին ֆիզիկական և մտավոր տարբեր ունակություններ վերագրելով, տեսակավորում էր ու դասակարգում, նույնպես արդարացնում էր գոյության կռիվ ընթացքում «գերիշխող ռասայի» հաղթանակը՝ ի հաշիվ «ստորադասի»⁵:

Օսմանյան կայսրության գիտական շրջանակներ սոցիալ-դարվինիզմը և եվրոպական փիլիսոփայական ու քաղաքական մտքի առանձին գաղափարներ սկսել են ներթափանցել 19-րդ դարի կեսերին՝ եվրոպացիների քաղաքական (պատերազմներ, պայմանագրեր, բարենորոգումների ծրագրեր, ռազմական առաքելություններ), տնտեսական (կոնցեսիաներ, ֆինանսաբանկային համակարգ) և միսիոներների կրթական գործունեության հետևանքով: Սոցիալ-դարվինիզմը, որը որոշակի դրսևորումներ ունեցավ կայսրության այլ համայնքներում ևս⁶, իր ողջ էությանը դրսևորվեց երիտթուրքական մտավորական և քաղաքական վերնախավի աշխարհայացքում մասամբ նրանց ռասիստական, մասամբ էլ էլիտիստական գաղափարներին սինթեզվելու միջոցով⁷: Բրիտանացի քաղաքական գործիչ Չարլզ Բաքստոնը վկայում է այդպիսի մի մասնավոր դեպքի մասին: 1908 թ. հեղաշրջման նախօրեին, երբ Մակե-

2 Նոյն տեղում, էջ 1356:

3 Տե՛ս **Simon M. W.**, Herbert Spencer and the “Social Organism”, “Journal of the History of Ideas”, 1960, Vol. 21, No. 2, էջ 297:

4 Տե՛ս **Bergman J.**, Darwinism and Nazi Race Holocaust, “Journal of Creation”, 1999, N 13 (2), էջ 106:

5 Տե՛ս նույն տեղում, էջ 101:

6 Մինչ երիտթուրքական հեղաշրջումը Սիրիայի և Լիբանանի միսիոներական դպրոցներում Դարվինի և Սպենսերի աշխատություններն ուսուցանելու, Սպենսերի «Սինթետիկ փիլիսոփայությունը» որպես դասավանդման ուղեցույց օգտագործելու, թերթերում հատվածներ թարգմանաբար տեղադրելու մասին մանրամասն տե՛ս **Elshakry M.**, Reading Darwin in Arabic, 1860-1950, Chicago and London, The University of Chicago Press, 1973, էջ 82-86: Հայ իրականության մեջ հանդիպում ենք հղումներ Դարվինին և Սպենսերին, մասնավորապես Կահիրեում լույս տեսած «Լուսաբերի» անդրանիկ համարը սկսվում էր հետևյալ կերպ. «Կեանքի պայքարը կը մղուի հակամարտ տարրերու դեմ: Անհամար գոյակներ կը ջնջուին, և այն, որ իր մեջը բաւարար կենսունակութիւն և իր շուրջը նպաստաւոր պայմաններ ունի, կը տոկայ ու կը մնայ. մէկ խօսքում արժանաւորը կ'ապրի, անարժանը կը մեռնի, ըստ Տարուի-նի տեսութեան (the survival of the fittest)» (Մամուլը, «Լուսաբեր», Գահիրէ, 1904, N 1, էջ 1): Թերթը խնդրում էր հայ ընթերցողի աջակցությունը՝ «գոյության կռիվում» հաղթելու և, հայկական մշակույթը պահպանելով, հայ ժողովրդի ազգային ինքնության կենսունակությանը նպաստելու համար: Հայ քաղաքական շրջանակները ևս ծանոթ էին սոցիալ-դարվինիզմին: Մասնավորապես, ՀՅԴ աշխարհայացքում և կուսակցության հիմնադիրների սոցիալ-քաղաքական հարցադրումներում դրա առանձին դրույթների առկայության, սակայն բարոյական և հումանիստական տեսանկյունից այն որպես գաղափարախոսություն մերժելու մանրամասն քննությունը տե՛ս **Խուդինյան Գ.**, ՀՅ Դաշնակցության քննական պատմություն (ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը), Եր., հրատ. ՀՅ Դաշնակցության, 2006, էջ 83-84:

7 Տե՛ս **Akcam A. T.**, A Shameful Act, the Armenian Genocide and the Question of Turkish Responsibility, New York, Metropolitan Books, “Henry Holt and Company”, 2006, էջ 57:

դոնիայով ճանապարհորդելիս կանգ են առել Օհրիդում, տեղի երիտթուրք կայնականը Բաքստոնի ուղեկցորդին խնդրել է իր համար ձեռք բերել արգելված գրականություն, մասնավորապես՝ Հերբերտ Սպենսերի աշխատանքները⁸:

Երիտթուրքական շրջանակներում սոցիալ-դարվիճիստական գաղափարների տարածման գործում մեծ ներդրում է ունեցել Կոլմար ֆոն դեր Գոլցը⁹: 1883-1895 թթ. նա մարզել է օսմանյան սպայակազմի մի քանի սերունդ, որոնցից շատերը համալրել են «Միություն և առաջադիմություն» կոմիտեի* շարքերը: 1883 թ. հեղինակած «Das Volk in Waffen» («Ջինված ազգ») աշխատության մեջ Գոլցն առաջ է քաշում «զինված ազգի» գաղափարը՝ հայտարարելով, որ նոր ժամանակներում ի հայտ է եկել պատերազմի նոր տեսակ, որում պետությունը կարող է հաղթանակ տանել կատարյալ միլիտարիզացման, բոլոր ռեսուրսները գործի դնելու և թշնամուն երկարատև պայքարում հյուծելու պարագայում: Այս տեսության մեջ արտահայտվում էր Գոլցի սոցիալ-դարվիճիստական աշխարհայացքի այն դրույթը, ըստ որի՝ ազգի զարգացման ճանապարհին պատերազմն անհրաժեշտ է, ցանկալի և անխուսափելի: «Survival of the fittest»-ի սկզբունքի համաձայն՝ ուժեղ ազգերն արդարորեն կկանեն թույլերին. «...հավիտենական խաղաղությունը նշանակում է հավիտենական մահ»¹⁰: «Ջինված ազգ» (asker millet) տերմինը նա սկսեց կիրառել հենց թուրքերին նշելու համար՝ հիմնվելով եվրոպական թյուրքագիտական ուսումնասիրությունների վրա, համաձայն որոնց՝ թուրքերը Կենտրոնական Ասիայից եկած թյուրքական ցեղեր են, նրանք ի ծնե զինվոր են, իսկ պատերազմելը նրանց մասնագիտությունն է¹¹: Գոլցը համակրել է երիտթուր-

8 Տե՛ս Buxton C. R., Turkey in Revolution, New York, "Charles Scribner's Sons", 1909, էջ 36:

9 Կոլմար ֆոն դեր Գոլցը (1843-1916) ծնվել է զինվորականի ընտանիքում: 18 տարեկանից ծառայության է անցել պրուսական բանակում, մասնակցել 1866 թ. ավստրո-պրուսական, 1870-1871 թթ. ֆրանս-պրուսական պատերազմներին: 1871 թ. նշանակվել է Պոտոսամի ռազմական դպրոցի, 1878 թ. Բեռլինի ռազմական ակադեմիայի դասախոս, ռազմական գործի վերաբերյալ հեղինակել է աշխատություններ, դասավանդման ձեռնարկներ: Օսմանյան կայսրությանը մատուցած ռազմական ծառայությունների համար նրան նախ շնորհվել է փառայի, ապա 1895 թ. մուշրիի (ֆելդմարշալի) կոչում:

* «Օսմանյան միասնության ընկերությունը» հիմնադրվել է 1889 թ. Կ. Պոլսում, կարճ ժամանակ անց՝ վերանվանվել «Միություն և առաջադիմություն» կոմիտե: Կոմիտեի անդամները կոչվել են «երիտասարդ թուրքեր» դարաշրջանին հատուկ նմանատիպ կառուցվածք ունեցող և հակաբռնատիրական, սահմանադրական, ազգային-ազատագրական ծրագրեր հետապնդող այլ կազմակերպությունների հետևողությամբ, ինչպես, օրինակ, «Երիտասարդ Իտալիան»: Մենք հետևում ենք հայոց պատմագրության մեջ ընդունված ուղեգծին և «երիտթուրք» անվանումը գործածելիս սույն հոդվածի շրջանակներում նկատի ունենք միայն «Միություն և առաջադիմություն» կոմիտեի անդամներին: Սակայն բոլոր երիտթուրքերը չէ, որ այս կոմիտեի անդամ էին: Օրինակ՝ 1902 թ. հետո կոմիտեից առանձնացած «Անհատական նախաձեռնության և ապակենտրոնացման լիգան» (Teşebbüs-i Şahsi ve Adem-i Merkeziyet Cemiyeti) և 1911 թ. ստեղծված «Ազատություն և համաձայնություն» (Hürriyet ve İtilâf) կուսակցությունը ևս կազմված էին երիտթուրքերից, որոնք, ազգայնական լինելով հանդերձ, գաղափարական և ծրագրային առումներով տարբերվում էին «Միություն և առաջադիմություն» կոմիտեից: Կոմիտեն 1909 թ. Կազմակերպությունների մասին (Cemiyetler Kanunu) օրենքով ստացել է կուսակցության կարգավիճակ, բայց բանի որ կազմակերպության բնույթն այդպես էլ չի փոխվում, մենք «կոմիտե», «կոմիտեական» տերմինները կգործածենք նաև ավելի ուշ ժամանակերից ի համար (տե՛ս Ramsaur E. E., The Young Turks: Prelude to Revolution, New York, "Russell&Russell", 1970, էջ 15, Bayir D., Minorities and Nationalism in Turkish Law, "ASHGATE", 2013, էջ 51-52):

10 Akmeşe H. N., The Birth of Modern Turkey: The Ottoman Military and the March to World War I, London, "I.B. Tauris", 2005, p. 22.

11 Տե՛ս Cahun Léon, Introduction à l'histoire de l'Asie. Turcs et Mongols des origines à 1405, Paris, "Armand Colin et C Éditeurs", 1896, էջ 75:

քական շարժմանը, հեղաշրջման մեջ ընդգծել սպաների ունեցած դերը: 1908 թ. հեղաշրջումից հետո, պահելով նամակագրական կապը իր սաների հետ, Գուլը նրանց խորհուրդ էր տալիս. «...եղէ՛ք հզոր և չեք ենթարկվի անարդարության»¹²: Ի պատասխան Գուլի՝ այդպիսի ոգով գրված մի հոդվածի՝ երիտթուրք մայոր Ալի Ֆուադն ասել է. «Մեր հարգարժան տիրոջ գրած այս հոդվածը բոլոր զինվորները՝ ֆելդմարշալից մինչև լեյտենանտ, անընդհատ պետք է կարդան... Ես վստահեցնում եմ, հարգարժան տեր, որ մենք խստորեն կհետևենք Ձեր խորհրդին՝ համարելով այն մեր ուղեցույցը»¹³: Նշենք նաև, որ «Միություն և առաջադիմություն» կոմիտեի ստեղծումից մի քանի տարի անց՝ 1895 թ., կոմիտեն արդեն ուներ երկու բաժանմունք՝ Փարիզում և Ժնևում: Այդ բաժանմունքների անդամները կապ էին պահում եվրոպական գիտական և քաղաքական շրջանակների հետ, նրանցից ազդվում գաղափարապես: Կարելի է ենթադրել, որ հեղաշրջման բարեհաջող ավարտից հետո, երբ առանձին գործիչներ վերադարձան Օսմանյան կայսրություն, իրենց հետ բերեցին այդ ազդեցությունը՝ սինթեզելով այն կոմիտեի ընդհանուր գաղափարախոսությամբ: Գաղափարական առումով սոցիալ-դարվիճիզմի որդեգրմանը նպաստող հանգամանք էր նաև դարեր ի վեր թուրքերի՝ կայսրության «գերիշխող համայնք» (Millet-i Hakime)¹⁴ դիտվելը: Սակայն ընդհանուր առմամբ «Միություն և առաջադիմություն» կոմիտեն, իշխանության գալուց հետո ընտրողաբար վերցնելով տեսական որոշ գաղափարներ, դրանք օգտագործում էր բազմազգ, բազմակրոն կայսրությունը միատարր դարձնելու և թրքացնելու՝ պետության տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական քաղաքականությունն արդարացնելու համար:

1. Պայքարը և պատերազմը սոցիալ-դարվիճիզմի համատեքստում

1908 թ. հեղաշրջումից հետո փոխվեց երիտթուրքերի վերաբերմունքը գիւնուժի և բանակի հանդեպ: Դա պայմանավորված էր նաև նրանով, որ հեղաշրջման փաստացի իրականացնողները Մակեդոնիայում տեղակայված օսմանյան երրորդ բանակի սպաներն էին: Հեղաշրջումից ի վեր կոմիտեն և օսմանյան բանակը հռչակվեցին որպես ազգը փրկող երկու ուժեր, որոնք ոչ մի գոհողության առջև կանգ չեն առնի Սահմանադրության պահպանման ու բռնապետության կողմնակիցների ոչնչացման ճանապարհին¹⁵: Ուժի կիրառմամբ իշխանության գալուց հետո երիտթուրքական կոմիտեն շարունակեց

12 Akmeşe H. N., op. cit., p. 67.

13 Նույն տեղում, էջ 66:

14 «Գերիշխող համայնք» մասին մանրամասն տե՛ս Akçam A. T., A Shameful Act..., էջ 48:

15 Տե՛ս Hanioglu Ş. M., Preparation for a Revolution: The Young Turks, 1902-1908, Oxford, Oxford University Press, 2001, էջ 286:

մնալ ռազմականացված (militarized)՝ պացիֆիզմը համարելով վտանգավոր կայսրության գոյատևման համար: Դրանից բացի՝ սոցիալ-դարվիսիստական մտայնությամբ և Գուլգի ազդեցությամբ կոմիտեի անդամներից շատերը պատերազմից խուսափելը դիտում էին որպես մարդկային հասարակության զարգացման կարևոր փուլի անտեսում¹⁶: Երբ 1912 թ. հոկտեմբերին Բալկանյան դաշինքը պատերազմ հայտարարեց Օսմանյան կառավարությանը, երիտթուրքերը սկսեցին պաշտպանել պատերազմի գաղափարը¹⁷: Կոմիտեի գաղափարախոսներից Մունիս Թեքինավիր Բալկանյան պատերազմները որակեց որպես թուրքերի «գոյության կռիվ»¹⁸, իսկ դոկտոր Նազըմը Բալկաններում թուրքերի հինգհարյուրամյա իշխանությունը վերագրեց այն հանգամանքին, որ «մյուսների մեջ թուրքական ռասան է ապացուցել ամենահարմարվածի տեսությունը իր վերադաս հատկանիշների շնորհիվ»¹⁹: 1912 թ. հոկտեմբերի 4-ին Կ. Պոլսի Սուլթանահմեդի հրապարակում երիտթուրքերը մեծ հավաք կազմակերպեցին, որի ժամանակ ճառով հանդես եկան մի շարք պետական գործիչներ, իսկ Մեհմեդ Թալաթը* և օսմանյան խորհրդարանի պատգամավոր Պետրոս Հալաջյանը ճոճում էին օսմանյան դրոշը և գոչում. «Պատերազմ, մենք պատերազմ ենք ցանկանում»: Ամբոխի մեջ գտնվող ուսանողները կրկնում էին կոչը և ավելացնում. «Հարձակվենք Պոլովդիվի, հարձակվենք Սոֆիայի վրա»²⁰: Հաջորդ օրը երիտթուրքական պարբերական «Թանին»-ի խմբագիր Հյուսեյն Ջահիդը հայտարարում է. «Գոյություն ունի միայն մեկ արարք, մեկ ցանկություն, որը լցրել է ազգի կյանքը և գոյությունը. պատերազմ, պատերազմ, պատերազմ»²¹: Թեև օսմանյան բանակի գլխավոր շտաբի պետ Հյուսեյն Նազըմը հայտարարում էր, որ պատերազմի հռչակումից մեկ շաբաթ անց օսմանյան դրոշը կծածանվի Սոֆիայի վրա, այն բոլորովին այլ ելք ունեցավ²²: Օսմանյան կայսրությունը պարտություն կրեց, որի արդյունքը եղավ Բալկանյան թերակղզու անկախացումը օսմանյան լծից: Պարտությունը, իհարկե, երիտթուրք գաղափարախոսների կողմից ռացիոնալիզացվեց՝ հռչակվելով թուրքական ազգային ինքնության խթան, «ոչ հավատարիմ և խնդրահարույց տարրերից», ինչպես նաև մի տարածաշրջանից ազատվելու

16 Տե՛ս նույն տեղում, էջ 304:

17 Տե՛ս Hall C. R., The Balkan Wars 1912-1913: Prelude to the First World War, Taylor & Francis, 2002, էջ 11-12:

18 Տե՛ս Tekin Alp, The Turkish and Pan-Turkish Ideal, London-England, Liberty Press, [1917], 1993, էջ 54:

19 Hanioglu S. M., Preparation for a Revolution..., p. 297.

* Մեհմեդ Թալաթը, ով կոմիտեի առանցքային գործիչներից էր, Օսմանյան կայսրությունում զբաղեցրել է մի քանի պաշտոններ: 1909 թ. նա օսմանյան նոր խորհրդարանում ընտրվել է պատգամավոր Ադրիանապոլսից, 1909 թ. Հուլիսին նշանակվել ներքին գործերի նախարար, 1912 թ. աշնանը դարձել փոստի նախարար, 1913 թ. հուլիսին կրկին նշանակվել է ներքին գործերի նախարար, 1917-1918 թթ. զբաղեցրել է Օսմանյան կայսրության մեծ վեգիրի պաշտոնը:

20 Kieser H.-L., Talaat Pasha: Father of Modern Turkey, Architect of Genocide, Princeton & Oxford, Princeton University Press, 2018, p. 125. Վկայությունը Մեհմեդ Ջավիդի օրագրից է, ով նույնպես ներկա էր ցույցին:

21 Նույն տեղում, էջ 126:

22 Տե՛ս Akçam A. T., A Shameful Act..., էջ 85:

միջոց, որն անարդյունք կլանում էր կառավարության ջանքերը և ֆինանսները²³։

Օսմանյան կայսրության մուտքն Առաջին համաշխարհային պատերազմ երկրում ընդունվեց նույն խանդավառությամբ։ Թուրք-գերմանական դաշինքը երիտթուրքական կառավարությունը համարում էր բնական երկու ժողովուրդների «նմանությունների» և ընդհանուր թշնամու առկայության պայմաններում։ Այդ իսկ պատճառով թուրքական կողմը համաձայնագրի առաջարկ կատարել էր դեռևս 1914 թ. հուլիսին։ Նույն ամսին սկսվել է նաև ընդհանուր զորահավաքի նախապատրաստությունը կայսրությունում՝ պատերազմ մուտքից և 1914 թ. նոյեմբերի 14-ի ջիհադի հայտարարությունից մոտ երեք ամիս առաջ²⁴։ Մեպտեմբերին Ներքին գործերի նախարարությունում տեղի ունեցած քննարկման ընթացքում ֆինանսների նախարար Մեհմեդ Ջավիդը պնդում էր, որ Ռուսաստանի դեմ պատերազմը երկրի շահերից չի բխում։ Պատերազմի կողմնակիցների թվում էին խորհրդարանի նախագահ Հալիլ Մենթեշեն, պատերազմի նախարար Իսմայիլ Էնվերը և ներքին գործերի նախարար Թալաթը²⁵։ Նրանք միասին կարողանում են համոզել օսմանյան նավատորմի նախարար Ահմեդ Ջենալին, որը դեռևս գտնում էր, որ պատերազմում չեզոքություն պահպանել հնարավոր է։ Ջենալի դիրքորոշումը փաստում է նաև երիտթուրք գաղափարախոսներից Հալիդե Էդիպը։ Հոկտեմբերին Էդիպի տուն հերթական այցի ժամանակ Ջենալը նրան հայտնել է, որ եթե կառավարությունը պատերազմի մեջ մտնի, ինքը հրաժարական կտա։ Երեք օր անց Էդիպին նույն պատասխանն է տվել նաև Ջավիդը²⁶։ Նույն ամսի 18-ին Օսմանյան կայսրությունը մտել է պատերազմի մեջ, և, խոստմանը համաձայն, Ջավիդը հրաժարական է տվել։ Իսկ Ջենալը, փոխելով իր դիրքորոշումը, ստանձնել է օսմանյան երրորդ բանակի հրամանատարությունը, որը պետք է պատերազմական գործողություններ ծավալեր Կովկասյան ճակատում։ Իր որոշումը նա հիմնավորում էր նրանով, որ եթե Անտանտը հաղթի, օսմանցիները կկորցնեն Կ. Պոլիսը, իսկ եթե թուրքերը և գերմանացիները հաղթեն, Օսմանյան կայս-

23 Տե՛ս **Ahmed Emin**, *The Development of Modern Turkey as Measured by its Press*, New York, 1914, էջ 112:

24 Տե՛ս **Kieser H.-L.**, *Talaat Pasha...*, էջ 189:

25 Տե՛ս նույն տեղում, էջ 193:

26 Տե՛ս **Edib H.**, *Memoirs of Halide Edib*, New York, London, “The Century Co.”, 1926, էջ 381: 1915 թ. հունվարին տպագրված մի հոդվածում Բենիամին Պետրոսյանը նշում է, որ շատ մակերեսային տեսակետ է պնդելը, թե թուրքական կառավարությունը պատերազմի մեջ է մտել հապճեպորեն կամ ստիպողաբար։ Եռյակ դաշինքին անդամակցելը ևս եղել է հաշվարկված։ Ըստ հոդվածագրի՝ թուրքական կառավարությունը հավատում է, որ հակառակորդ ճամբարում գտնվողները որոշել են «բաժանել իրենց ժառանգությունը», այն դեպքում, երբ դաշնակիցները բավարարվում են միայն ֆինանսական միջամտությամբ։ Բերելով հատվածներ երիտթուրք գաղափարախոսների «Թյուրք յուրդու»-ի խմբագիր Յուսուֆ Աքչուրայի 1914 թ. նոյեմբերի 6-ի դասախոսությունից, «Թերջուման»-ի խմբագիր Աղաօղլու Ահմեդից, զորղ Մեհմեդ Էմինի բանաստեղծություններից, Գյոքալիի «Իսլամ մեջ մուսաբ»-ում տպագրած հոդվածից նա եզրակացնում է, որ վերոնշյալ բոլոր հեղինակները պատերազմը հռչակում են անհրաժեշտ, ազատագրական և սուրբ։ Նույնիսկ Հալիդե Էդիպը 1914 թ. նոյեմբերի 28-ի «Թամին»-ում «Փրկության պատերազմ» խորագրի ներքո, գրում էր, որ պատերազմն անհրաժեշտություն էր, բայց ավելի լավ կլիներ, եթե այն բռնկվեր 30 տարի հետո. «Ես սրա մասին տեղյակ էի մանկությունից, քանի որ գիտեի իմ ռասայի վրեժխնդիր ոգու մասին» (տե՛ս **Bedrossian B.**, *Why Turkey Entered the General War. From the Turkish Point of View, “The Orient”*, Constnatinople, “Bible House”, 1915, Vol. VI, N 4, էջ 35-36):

րությունը ձեռք կբերի այնպիսի անկախություն, որը երբեք չի ունեցել²⁷: Հրաժարականի դիմումը հետ վերցնելու առաջարկով Ջավիդին դիմել է կենտրոնական կոմիտեի անդամ դոկտոր Նազըմը²⁸ հետևյալ բացատրությամբ. «Եթե կենտրոնական կոմիտեն նշանակի ինձ պաշտոնի, բայց ես հրաժարվեմ, այդ պահից սկսած՝ ցանկացած երիտասարդի կարող են ատրճանակ տալ Ջավիդ բեյին սպանելու համար, որովհետև ես հայրենիքի համար ընկած մարդ եմ... բոլոր մարդիկ կսկսեն ինձ անվանել «դավաճան հրեա»: Հայրենիքում ես այլևս տեղ չեմ ունենա»: Ջավիդը միտքը չի փոխում, իսկ Նազըմը հայտարարում է, որ «այս պատերազմում մենք կա՛մ կոչնչանանք, կա՛մ կհաղթենք»: Հանդիպումից մի քանի օր անց Նազըմը, ինքը դյունե լինելով, սկսում է Ջավիդին բոլորի մոտ «դավաճան հրեա» անվանել, ծաղրանքով նրա անունը փոխում է Դավթի²⁹: Կոմիտեի ընդհանուր միլիտարիստական ուղեգծի մեջ որոշ գործիչների՝ դրանից խուսափելը դիտվում էր հայրենիքի դավաճանություն և համապատասխան լուծում ստանում: Թալաաթը նույնպես պատերազմը դիտում էր որպես իրավիճակը փոխելու հնարավորություն: 1915 թ. մայիսին հարցազրույցներից մեկի ժամանակ ներքին գործերի նախարարը հայտարարում է, որ պատերազմին մասնակցում են մեծ պատրաստականությամբ՝ հաշվի առնելով նաև այն, որ բոլոր մահացու թշնամիները հակադիր խմբակցությունում են: Թալաաթը նաև մեկնաբանում է. «Այսօր մենք ուժեղ ենք, ուժեղ՝ առավել, քան երբևէ... Եկե՛ք երկու տարի հետո, այն ժամանակ կհասկանաք, թե ինչ բարեփոխումներ իրականացված կլինեն: Մեր առաջընթացին խանգարող ամենամեծ խոչընդոտը կապիտուլյացիաներն էին*, որոնք վերացվել են: Այժմ Օսմանյան կայսրությունը կարող է ազատորեն շարժել իր վերջույթները»³⁰:

Պատերազմը թուրքական կառավարության համար ոչ միայն արտաքին թշնամու դեմ պայքարի, անցանկալի միջազգային պայմանագրերը չեղարկե-

27 Տե՛ս Edib H., նշվ. աշխ., էջ 382-83: Նույն եզրահանգումն առկա է նաև Ջեմալի հուշերում (տե՛ս Djemal Pasha, *Memories of a Turkish Statesman – 1913-1919*, New York, “George H. Doran Company”, 1922, էջ 111): Ջեմալը բացատրում է, որ դեմ էր մեկ շաբաթ կամ մեկ ամիս հետո բռնկվելիք պատերազմին, քանի որ կասկածում էր Ֆրանսիային, Անգլիային և Ռուսաստանին դիմակայելու կայսրության կարողությանը: Բայց եթե պատերազմը բռնկվեր հինգ տարի հետո, դա միանշանակ նոր հնարավորություններ կստեղծեր կայսրության համար (տե՛ս նույն տեղում, էջ 114): Իր հուշերում Ջեմալը նաև փորձում է հերքել այն կեղծ լուրը, ըստ որի ինքն այնքան է դեմ եղել պատերազմին, որ նույնիսկ վեճի է բռնվել Էնվերի հետ և վիրավորել նրան ոտքից: Այս կեղծ լուրի շրջանառության մեջ Ջեմալը մեղադրում է դեսպան Մորգենթաուին (տե՛ս նույն տեղում, էջ 128):

28 Կենտրոնական կոմիտեն «Միություն և առաջադիմություն» կուսակցության ներսում որոշումներ կայացնող մարմինն էր: Կայսրության համար որոշիչ 1912-1916 թթ. կենտրոնական կոմիտեի 12 հոգանոց կազմը մնաց անփոփոխ, որի անդամներից էր նաև դոկտոր Նազըմը (տե՛ս **Авакян А.**, Генотид армян: механизмы принятия и исполнения решений, Ер., МИГА, 2013, էջ 25):

29 Տե՛ս **Kieser H.-L.**, Talaat Pasha..., էջ 215: Մորգենթաուն նույնպես վկայում է, որ թուրքերը որոշել էին միանալ Գերմանիային և «խորտակվել կամ լողալ» նրանց հետ (տե՛ս **Morgenthau H.**, *Ambassador Morgenthau's Story*, New York, Doubleday, Page & Company, 1918, էջ 124):

* Կապիտուլյացիաները մեծ տերություններին շնորհված արտոնություններ էին կրոնի, իրավունքի, առևտրի, ապա նաև արդյունաբերության ոլորտներում: Առաջին կապիտուլյացիաները տրվել են 16-րդ դարի սկզբից, որոնք սկսել են թարմացվել 30-50 տարով և տևել մինչև 1914 թ., երբ Օսմանյան կայսրությունը միակողմանի չեղալի հայտարարեց դրանք:

30 “Statement by Talaat Bey”, “The Orient”, 1915, Vol. 6, N 21, p. 143. Հարցազրույցը վերցրել է «Նոյե ֆրայե պրես» թերթի վիեննական թղթակիցը, անմիջապես արտատպվել է «Թեմին»-ում, որտեղից էլ՝ «Օրինտ»-ում:

լու, այլև «ներքին թշնամու» ոչնչացման հնարավորություն էր: Եվ թուրք-իտալական (1911-1912 թթ.), և՛ Բալկանյան (1912-1913 թթ.) ու Առաջին համաշխարհային (1914-1918 թթ.) պատերազմները նման հնարավորություն ընձեռեցին երիտթուրքական վերնախավին: Կառավարությունը ներքինացրեց (internalized) այդ պատերազմները: Նպատակը որոշակի խնդիրներ լուծելն էր, ինչպես, օրինակ, տարածքի մաքրում չճշտված ազգային փոքրամասնություններից, բնակչության միատարրացում, ազգային տնտեսության հիմնում: Ինչպես դիպուկ նկատում է պատմաբան Հանս Լուկաս Կիզերը, Թալաաթը ցեղասպանությունները, էթնիկ գտումները, բնակչության արտաքսումը դիտարկում էր որպես «տանն իրականացվող տոտալ պատերազմի ասիմետրիկ տեսակ»³¹: Այս պետական քաղաքականության մեջ գոհին որպես «ազգի թշնամի» և «դավաճան» պիտակավորելը կարևոր տեղ էր զբաղեցնում: Փիլիսոփա և քաղաքական տեսաբան Հանս Արենդտը պնդում է, որ «ազգի թշնամու» (կամ «ներքին թշնամու») գաղափարն առաջ է եկել 1871 թ. ֆրանս-պրուսական պատերազմի ընթացքում ձևավորված ազգայնականության հետևանքով՝ հիմքում ունենալով Ա. Գոբինոյի ռասայական տեսությունը³²: Արդյունքն այն էր, որ պետության որոշ բնակիչներ սկսեցին ստորադասել այն քաղաքացիներին, որոնք իրենց իրավունքները ձեռք էին բերել ոչ թե «արյամբ և ծնունդով», այլ օրենքով³³: Բնականաբար, ճգնաժամային պայմաններում՝ պատերազմ, սով, համաճարակ, հենց այս խումբն էր հայտարարվում «ազգի թշնամի»: Այս մեկնաբանության մեջ լրիվ տեղավորվում են երիտթուրքական գլխավոր գաղափարախոսի՝ Ջիյա Գյոքալփի՝ թուրքական ազգայնականության շուրջ քննարկումները: Նախ՝ նա հստակ առանձնացնում էր մուսուլմաններին ոչ մուսուլմաններից, ազգի սահմանման մեջ շեշտադրում մեկ ծագումը, մեկ լեզուն ու մշակույթը, մեկ այլ դեպքում էլ՝ միջավայրն ու դաստիարակությունը, ինչը երբեմն խճճում էր հենց երիտթուրքերին: Հեղաշրջումից հետո նա դեռևս հակված էր օսմանիզմի գաղափարախոսությանը: 1913 թ. իր գրվածքներում արդեն մերժում էր «օսմանյան ազգ» հասկացությունը, թեև ընդունում էր բազմազգ կայսրության գոյության հավանականությունը: Իսկ 1914 թ. արդեն գրում էր, որ պետությունը կարող է գոյատևել միայն մեկ ազգի վրա հենվելով, քանի որ տարբեր ազգերի ներկայացուցիչները չեն կարող սիրել նույն հայրենիքը, հետևաբար նաև հավատարիմ լինել

31 Kieser H.-L., Talaat Pasha..., p. 26.

32 Ռասայական տեսությունը զարգացրել է ֆրանսիացի փիլիսոփա, դիվանագետ **Արդուր դե Գոբինոն (1816-1882)**, որը սոցիալ-պատմական պրոցեսի իրական սուբյեկտ համարում էր ռասան: Ընդունելով, որ բոլոր մարդիկ առաջացել են նույն նախահորից, Գոբինոն պնդում էր, որ տարաբնույթ հանգամանքների ազդեցության հետևանքով մարդկանց մոտ ձևավորվել են արտաքին-ֆիզիկական (մաշկի գույն, դիմագծեր), մտավոր և հոգեկան հատկանիշներ, որոնք այլևս կայուն հաստատուն են: Դրանց հիման վրա Գոբինոն առանձնացնում էր ռասաները, որոնց արդեն որպես հավաքականություն, օժտում էր «վերադաս» և «ստորադաս» հատկանիշներով: Թեև Գոբինոն ինքը դեմ էր գաղութատիրությանը, ստրկատիրությանը, նրա տեսությունն օգտագործվում էր արդարացնելու համար երկուսն էլ և ոչ միայն (տես **Гобино Ж. А.**, Опыт о неравенстве человеческих рас, М., «Одиссей», «ОЛМА-ПРЕСС», 2001, էջ 133, **Годман А. Б.**, Элитизм и расизм (критика философско-исторических воззрений А. де Гобино), «Расы и народы», вып. 7, М., 1977, էջ 139):

33 Տե՛ս **Arendt H.**, The Origins of Totalitarianism, New York, “Harcourt”, 1973, էջ 174:

դրան³⁴: Կայսրության հույն, հայ և ասորի ժողովուրդները, որոնք օգտվում էին Սահմանադրությամբ տրված իրավունքներից, համաձայն տեսաբանի, միշտ մնալու էին «օտար մարմին» թուրքական ազգային պետությունում³⁵:

Ցանկացած քարոզչության համար պատերազմը բարենպաստ հող է պահովում: Թեկինալվիի բնորոշմամբ՝ Բալկանյան պատերազմների ժամանակ կեղծ ընկերները պատռեցին իրենց դիմակները. «Ոչ թուրք տարրերի վաղեմի վերաբերմունքը և մահմեդական ալքանացիների ապստամբությունը մեկ անգամ և ընդամիշտ բացեցին թուրքերի աչքերը, որոնք մինչ այդ կուրացած էին ստոյլ և խաբեությամբ, խիստ կերպով ու ցավալի փաստով ցույց տալով, որ նրանք, բացի իրենցից, ուրիշ ոչ մեկի աջակցությանը չեն կարող ապավինել...»: Այն ժամանակ, երբ բուլղարացիները, սերբերը և հույները թուրքական զորքը ներքաշեցին կռվի մեջ, ժողովրդի վատ տարրերի ապստամբություն սկսվեց՝ նախկին «ընկերների» ապստամբությունը, որոնք այժմ մեկը մյուսի ետևից աղքատ, ամայի երկիրը և ազգը թողնում են բախտի քմահաճույքին»³⁶: Կրոնական ընդհանրությամբ պայմանավորված՝ բալկանյան քրիստոնյա ժողովուրդների «դավաճան» պիտակը սկսեցին կայցնել կայսրության սահմաններում մնացած քրիստոնյաներին: Բալկանյան պատերազմներում օսմանյան բանակում հայ զինվորների ծառայությունը, հավատարմությունը հայրենիքին և սխրանքները մնում էին լոկալ երևույթ, չէին բարձրաձայնվում թուրքական կառավարության կողմից, քանի որ վերնախավն ուներ երկրի ներսում իրականացվելիք քաղաքական այլ նպատակներ³⁷: Դրանցով էլ պայմանավորված՝ պատերազմների և կորուստների բովանդակությունը վերաշարադրվում էր մուսուլմանների շրջանում համախոհներ ձեռք բերելու, ամբոխին մոտիվացնելու և ապացուցելու համար, որ եթե մասսայական ջարդեր չիրականացվեն, երկիրը նոր աղետի առջև կկանգնի³⁸: Նույնիսկ Ադանայի 1909 թ. կոտորածների ժամանակ, երբ նահանգի հայ բնակչության հանդեպ կար նախանձ սոցիալական առումով, կային մուսուլմաններ, որոնք ցավով էին խոսում կոտորածների մասին: Սակայն նրանք ևս, պետական քարոզչությանը տուրք տալով, նշում էին, որ դա էր ելքը, քանի որ հակառակ պարագայում «քրիստոնյաները կհարձակվեին և կիշխեին իրենց»³⁹: Նման դիրքորոշումը և քաղաքականությունը միայն «Միություն և առաջադիմություն» կոմիտեին վերագրելը սխալ է: Չեռնոգորիայի պատերազմի հայտարարումից անմիջապես հետո ներքին գործերի նոր նախարար Ահ-

34 Տե՛ս Heyd U., Foundations of Turkish Nationalism: The Life and Teachings of Ziya Gökalp, London, 1950, էջ 72, 73:

35 Տե՛ս նույն տեղում, էջ 132:

36 Tekin Alp, նշվ. աշխ., էջ 15:

37 Տե՛ս Fikret Adanır, Non-Muslims in the Ottoman Army and the Ottoman Defeat in the Balkan War, A Question of Genocide: Armenians and Turks at the end of the Ottoman Empire, eds. Suny R.G., Gocek F.M., Naimark N.M., NY, Oxford University Press, 2011, էջ 123:

38 Տե՛ս Chirot D., McCauley C., Why Not Kill Them All? The Logic and Prevention of Mass Political Murder, Princeton, Princeton University Press, 2006, էջ 208:

39 Woods H. C., The Danger Zone of Europe: Changes and problems in the Near East, London, "T.F. Unwin", 1911, p. 171.

մեղ Ռեշիդը (Ռեյ)⁴⁰ Բալկանյան պատերազմի բռնկման մեղքը բարդում է երկու հայ պատգամավորների՝ Պետրոս Հալաջյանի և Գաբրիել Նորատունկյանի վրա⁴¹: Պ. Հալաջյանին թուրքական թերթերը նույնիսկ ծաղրանկարներում պատկերում էին հայրենիքը վաճառող առևտրականի կերպարանքով⁴²: Օսմանյան խորհրդարանի պատգամավոր Վահան Փափազյանի վկայությամբ՝ թուրք-խտալական պատերազմի բռնկումով երիտթուրքական ակումբներն ամբողջի տրամադրություններն այնքան էին բորբոքում քրիստոնյաների դեմ, «որ կարծես մենք էինք Թրիփոլիի մէջ իրենց դէմ կռուողները»⁴³: Թալաաթի երաշխավորությամբ 1913 թ. ամռանը «Միություն և առաջադիմություն» կուսակցության Ջնյունիայի մասնաձյուղի քարտուղար նշանակված Մահմուդ Ջելալը (Բայար) պաշտոնին անցնելու հենց սկզբից գիտակցել է իր առաքելությունը, ինչպես նշում է իր օրագրում. «...փրկության պատերազմ [վարել] ազատագրելու համար թուրք ազգը նրանցից, ովքեր երբեք մեզնից մեկը չէին և չէին էլ կարող դառնալ», թրքացնել «գյավուր Իզմիրը», մասնավորապես ազատել Ջնյունիայի տնտեսությունը «ապագային, դավաճան, քինախնդիր [քրիստոնյա] գլուխներից և ձեռքերից»⁴⁴: Այն, ինչ թուրքական կառավարությունը սկսել էր, սակայն չէր կարողացել ավարտել Բալկանյան պատերազմների ընթացքում, շարունակեց Առաջին աշխարհամարտի ընթացքում: Բիթլիսի նահանգապետ Աբդուլհալիկը 1915 թ. ապրիլի 18-ի հեռագրով առաջարկում էր Թալաաթին «ոչնչացնել այն տարրերին, որոնք հայրենիքի այս հատվածում միշտ վտանգ են ներկայացրել պետության համար... և դա է պահանջում երկրի անվտանգությունը»⁴⁵: Նա իր առաջարկը հիմնավորում էր նաև նրանով, որ հայերը կայսրության արևելյան նահանգներում կարող են գերիշխել թուրքերին՝ պատերազմում մուսուլմանների ունեցած մարդկային մեծ կորուստների և իրենց տնտեսական առաջընթացի վրա հենվելով⁴⁶:

Բնականաբար, թուրքական կառավարությունը «ներքին թշնամու» ոչնչացումը ներկայացնում էր ոչ թե որպես ազգայնական-քաղաքական հեռահար նպատակների իրագործում, այլ որպես «ինքնապաշտպանություն», «երկրի ան-

40 «Ազատություն և համաձայնություն» (Hürriyet ve itilâf) կուսակցությունը ստեղծվել է 1911 թ.: Այն 1912 թ. հուլիսին ընդդիմադիր այլ ուժերի հետ հեղաշրջման միջոցով տապալել է երիտթուրքերին: Օգոստոսին ցրվել է նաև խորհրդարանը, որում մեծամասնություն էին կազմում երիտթուրքերը: 1913 թ. հունվարի 23-ին՝ այն բանից հետո, երբ հունվարի 22-ին Ադրիանապոլիսը հանձնվեց Բուլղարիային, երիտթուրքերը, կրկին հեղաշրջում իրականացնելով, ձևավորեցին կառավարություն: Այսպիսով մոտ վեց ամիս «Միություն և առաջադիմություն» կուսակցությունն ընդդիմություն էր քաղաքական դաշտում: Ամենդ Ռեշիդը պաշտոնավարում էր որպես ներքին գործերի նախարար հենց այս ժամանակահատվածում (տես **Lewis B.**, *The Emergence of Modern Turkey*, third ed., New York, Oxford, Oxford University Press, 2002, էջ 224-226):

41 Տես **Kieser H.-L.**, *Talaat Pasha...*, էջ 128:

42 Տես **Bora Isyar**, *The Origins of Turkish Republican Citizenship: the Birth of Race*, "Nations and Nationalism", N 11 (3), 2005, էջ 346:

43 **Փափազյան Վ.**, Իմ յուշերը, հատոր երկրորդ, Պեյրութ, Տպարան Համազգային ընկերութեան, 1952, էջ 155:

44 **Kieser H.-L.**, *Talaat Pasha...*, p. 175. Մահմուդ Ջելալի այդպիսի նպատակադրման և Ջնյունիայի նահանգի վալի, երիտթուրք Ռահմիի հետ համագործակցության արդյունքը նահանգի հույների կազմակերպված արտաքսումն էր 1914 թ. գարնանը:

45 Տես նույն տեղում, էջ 250:

46 Տես նույն տեղում:

վտանգության ապահովում»: Դանիացի արևելագետ Յոհաննես Օստրուպը պնդում է, որ դեռևս 1910 թ. աշնանը Թալաթյան իրեն հայերի վերաբերյալ ասել է. «Տեսնո՞ւմ եք, որ մեր և այս մարդկանց միջև կա անհամատեղելիություն, որը չի կարող լուծում գտնել խաղաղ ձևով. Կա՛մ նրանք մեզ ամբողջությամբ կոչնչացնեն, կա՛մ մենք ստիպված կոչնչացնենք նրանց: Եթե երբևէ այս երկրում գամ իշխանության, ես իմ ամբողջ ուժը կգործադրեմ հայերին ոչնչացնելու համար»⁴⁷: Արսեն Ավագյանն ապացուցում է երիտթուրքերի այս մտադրությունը՝ հիմնավորելով այն, որ նրանց որոշումներում «մենք» կամ «նրանք» կոնցեպտը գերիշխում էր արդեն 1910 թ., ի տարբերություն մի շարք ուսումնասիրողների, որոնք այս մտայնության ծագումը երիտթուրքական վերնախավում կապում են Բալկանյան պատերազմներում կրած պարտության և տարածքային կորուստների հետ⁴⁸: Հայերի ցեղասպանությունը երկրի «անվտանգության» համատեքստում ներկայացնելը հստակ երևում է ներքին գործերի նախարարի հռետորաբանությունից: ԱՄՆ դեսպան Հ. Մորգենթաուի հետ հանդիպման ժամանակ՝ 1915 թ. օգոստոսի սկզբին, Թալաթյանը հայերի նկատմամբ իր վերաբերմունքը հիմնավորում էր երեք կետերով. 1) հայերը հարստացել են թուրքերի հաշվին, 2) նրանք ցանկանում են գերիշխել թուրքերին և առանձին պետություն ստեղծել, 3) բացահայտորեն քաջալերել են թուրքերի թշնամիներին: Հետևաբար Թալաթյանը և կոմիտեն հանգել էին այն որոշման, որ նրանց պետք է «չեզոքացնել» մինչև պատերազմի ավարտը⁴⁹: Նմանապես Գյուլա Գերմանուսի⁵⁰ հետ խոսակցության ժամանակ Թալաթյանը ասում է. «Մենք չենք ատում քրիստոնյաներին... Իսլամական կրոնը խղճի ազատություն է առաջարկում հայտնի կրոնների դավանողներին... սակայն հայերից ոմանք բացահայտորեն այժմ մեր դեմ են, ուստի մենք ստիպված ենք ինքնապաշտպանության դիմել: Պատերազմն ավարտելու համար մենք պետք է մեր երկիրը նաքրենք հայերից ոչ թե ատելությունից դրդված, այլ ինքնապաշտպանության նկատառումներով»⁵¹: 1915 թ. հունիսին Հալիլ Մենթեշին ուղղված մի նամակում նախարարը պատերազմը կարևորել է հայ քաղաքացիների դեմ «ազգային գոյության կռիվ» սկսելու համար⁵²: Երբ Գերմանիայի դեսպան Հանս Վանգենհայմը փորձել է պարզել հայ բնակչության

47 Bjørnlund M., ‘When the cannons talk, the diplomats must be silent’: A Danish Diplomat in Constantinople during the Armenian Genocide, “Genocide Studies and Prevention”, 1-2, 2006, p. 201.

48 Տե՛ս Авакян А., նշվ. աշխ., էջ 41:

49 Տե՛ս Morgenthau H., նշվ. աշխ., էջ 337:

50 Պատերազմի ընթացքում հունգարական կառավարությունը հիմնել է Կարմիր մահիկի աշակցության ազգային կոմիտե: Կազմակերպության գործունեությունը սահմանափակվում էր Մերձավոր Արևելքի վերաբերյալ դասախոսություններ կարդալով և զինվորներին բժշկական օգնություն ցուցաբերելով: Արևելագետ Գյուլա Գերմանուսը նման մի դասախոսություն կարդալու և պատերազմի դաշնակցի հետ կապերն ամրապնդելու համար 1915 թ. Ուղարկվել է Կ. Պոլիս: Հենց այս շրջանում նրա վերաբերմունքը երիտթուրքերի նկատմամբ փոխվում է, քանի որ մինչև հեղաշրջումը նա անձամբ ձանձաղ է եռապետության երեք անդամներին, Կ. Պոլսում երիտթուրքական թռուցիկներ է տարածել, քարոզել օտար փոխառություններից լեզվի մաքրման, հեղափոխության և Սահմանադրության զարգացմանը (տե՛ս Gazdik D., Turanism in Hungary and Turkism in the Ottoman Empire through the lenses of a critic - Gyula Germanus, unpublished MA thesis, Budapest, Pázmány Péter Catholic University, 2019, էջ 20-21):

51 Մովս Լեդում, էջ 23:

52 Տե՛ս Kieser H.-L., Talaat Pasha..., էջ 7:

տեղահանության նպատակը, Թալապաթը պատասխանել է. «...մենք ազատագրում ենք մեզ հայերից՝ ձեզ համար ավելի լավ դաշնակից լինելու համար՝ ազատված ներքին թշնամու հարուցած թուլությունից»⁵³: Վերջապես, ներքին գործերի նախարարն ինքը ևս փաստում է Օսմանյան կայսրության հայ բնակչության ոչնչացման ծրագրի իրագործման համար պատերազմը որպես պատեհ առիթ օգտագործելը: Հրահանգ-հեռագրերից մեկում նա նշում է, որ հայերին, որոնք իբր հարյուրամյակներ շարունակ փորձում էին քանդել երկրի հիմքերը, ոչնչացնելու ցանկություն վաղուց կար, սակայն պահը հարմար չէր այդ «սուրբ նպատակը» իրագործելու համար, բայց ժամանակն է «փրկել հայրենիքն այս վտանգավոր տարրերից», գործ, որին պետք է լծվեն «մեծ պատվի և պարկեշտության տեր» պաշտոնյաները՝ «հայ» անունը Թուրքիայում վերջնականապես ջնջելու համար⁵⁴:

2. Սոցիալ-դարվինիզմի բիոթրգանական արձագանքները

Սոցիալ-դարվինիզմը հավատն է բնական գիտությունների հանդեպ և այն համոզմունքը, որ բնության օրենքները նույնությամբ գործում են մարդկային հասարակության մեջ: Այն իր հիմքում աղավաղված բիոթրգանական փիլիսոփայական ուղղություն է, քանի որ հիմնվում է մարդկային հասարակությունը որպես կենդանի օրգանիզմ ընկալելու դրույթի վրա: Հետևաբար այն օրգանիզմը, որն ավելի առողջ և ուժեղ է, գոյության կոմուն կհաղթի հիվանդին ու թույլին: Երիտթուրքերի աշխարհայացքում այդ հավատը նույնպես տեղ ուներ: Նրանք իրենց համարում էին «հասարակական» բժիշկներ, որոնք գիտության կիրառմամբ կբուժեն հասարակության հիվանդությունները⁵⁵: 1913 թ. երիտթուրքական հերթական հեղաշրջումից հետո կուսակցության մեջ որոշումներ կայացնողը դարձավ քաղաքացիական թևը՝ Թալապաթի գլխավորությամբ, որում հիմնական դերակատարությունը ստանձնել էր բժիշկների խումբը՝ դոկտորներ Նազըմը, Բեհաեդդին Շաքիրը, Ռյուսուլսին⁵⁶: Նազըմը և Շաքիրը նաև կենտրոնական կոմիտեի անդամներ էին, որոնք վճռական դերակատարություն են ունեցել Հայոց ցեղասպանության որոշման կայացման և դրա իրագործման մեջ: Ինչպես նրանց՝ ռազմաբժշկական կրթություն ստացած եվրոպացի կոլեգաները, երկու բժիշկներն էլ ընդգծված սոցիալ-դարվինիստներ էին, որոնք, քաղաքական վիթխարի իշխանությամբ օժտված լինելով, արդյունավետորեն կյանքի կոչեցին իրենց փիլիսոփայական հայացքները:

53 Նույն տեղում, էջ 20:

54 Նամակը չունի հասցեատեր և թվագրված չէ: Տե՛ս Akçam T., Killing Orders. Talat Pasha's Telegrams and the Armenian Genocide, "Palgrave Macmillan", 2018, էջ 187:

55 Տե՛ս Akçam A. T., A Shameful Act..., էջ 57:

56 Տե՛ս Zürcher E. J., The Unionist Factor. The role of the Committee of Union and Progress in the Turkish National Movement 1905-1926, Leiden, "E. J. Brill", 1984, էջ 76-78:

ընթացումը⁵⁷: Կոմիտեն, իր ստեղծման վայրով պայմանավորված (Արքայական զինվորական բժշկական դպրոց), ի սկզբանե բժիշկների և զինվորների խմբավորում էր: Նույնիսկ մինչև 1908 թ. հեղաշրջումը նրանց բանտային նամակներում հանդիպում ենք բիոթոգրամական տերմինաբանության. «Մարմինը բաղկացած է բազմաթիվ բջիջներից, այսինքն՝ փոքր կենդանիներից: Ինչպես որ մենք ենք ցանկանում առողջ լինել, այդպես էլ նրանք են ցանկանում առողջ լինել և աշխատում են դրա համար: Այսպիսով՝ հիվանդությունը, որը ծագում է՝ չնայած այն ջանքերի, որոնք մեր առողջության համար գործադրում են այդ կենդանիները, արդյունքն է մեր անուշադրության»⁵⁸: Այս հոեոտոբանությունն ուժեղացավ հատկապես թուրք-իտալական և Բալկանյան պատերազմների ընթացքում: Ի պատասխան բուլղարական մի թերթի՝ Օսմանյան կայսրության հետ բարեկամական կապեր հաստատելու կոչին՝ Սալոնիկում տպագրվող «Միլահ»-ը գրում էր. «...առյուծները կարող են ընկերանալ վագրերի հետ: Առյուծներից բաղկացած ազգը չի կարող ընկեր դառնալ Բուլղարիայի նման կատվի ձագի հետ»⁵⁹: Երիտթուրքական պաշտոնաթերթերը հաճախ էին տպագրում հողվածներ Մաքս Նորդաուից*, որի ազդեցությունը զգալի էր երիտթուրքական «Թյուրք յուրդու» պարբերականի վրա: Նորդաուի՝ սոցիալ-դարվինիստական ոգով հեղինակած և «Թյուրք յուրդու»-ի էջերում 1915 թ. արտատպված մի հողված ևս ներկայացնում էր ուժի արդարացիության գաղափարը. «...ոչ մի մոլեռանդ իրավագետ երբևէ չի պահանջել առյուծից, որ նա նախքան ոչխարին ուտելը նրա նկատմամբ իր սեփականության իրավունքը հաստատի: Առյուծը վերցնում է ոչխարին, որովհետև պարտավորված է. իր իրավունքն է ուտել նրան: Ոչխարի իրավունքը կլիներ նաև առյուծին սպանելը, եթե, իհարկե, կարողանար»⁶⁰:

1912 թ. գրված իր «Չորս բալկանցիներին» բանաստեղծության մեջ գրող Ֆեյզուլա Սաջիդը ոչ մուսուլմաններին, հատկապես անկախություն ձեռք բերած սերբերին, բուլղարացիներին, հույներին և չեռնոգորցիներին համեմատում է մանրէների հետ. «Թուրքական մաշկը չի վնասվի չորս մանրէներից: Ավա՛ղ, այդ մանրէները լքում են մեր ռասայի մարմինը»⁶¹: Չձուլվող ազգային, էթնիկ, ռասայական փոքրամասնություններին հիվանդությունների, հատկապես քաղցկեղի հետ համեմատելը պատմության մեջ շատ է հանդիպում: Ժա-

57 Տե՛ս Kieser H.-L., Talaat Pasha..., էջ 56:

58 Hanioglu M. Ş., The Young Turks in Opposition, New York, Oxford, Oxford University Press, 1995, p. 18-19.

59 Emin A., The Development of Modern Turkey as Measured by its Press, New York, "Longmans, Green&Co.", 1914, p. 102.

* Միմոն Մաքսիմիլիան Սյուդֆելդ (1849-1923) - սոցիալ-դարվինիստական աշխարհայացք ունեցող ֆիզիկոս, լրագրող և առաջատար սինիստ: Թեոդոր Հերցլի հետ հիմնադրել է Համաշխարհային սինիստական կազմակերպությունը: Հետաքրքրական է այն փաստը, որ 1923 թ. «Ճակատամարտը» հիշատակել է «հռչակարար փիլիսոփային մահը» և հանրայնացրել նրա կենսագրական որոշ տվյալներ (տե՛ս Մաքս Նորդաու, «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1923, N 3116, էջ 2):

60 Umüt K., Dogan G., The Young Turk historical imagination in the pursuit of mythical Turkishness and its Lost Grandeur (1911-1914), "British Journal of Middle Eastern Studies", 2016, Vol. 42, Issue 4, p. 8.

61 Umüt K., Dogan G., The Balkan Wars and the rise of the reactionary modernist utopia in Young Turk Thought and the Journal Türk Yurdu (Turkish Homeland), "Nations and Nationalism", 2015, N 21 (2), p. 361.

մանակին հունգարացի ազգայնական գրող Շանդոր Պետեֆին (1823-1849)՝ 1848 թ. հեղափոխության գաղափարական առաջնորդներից մեկը, փոքրամասնություններին բնութագրել է որպես «խոցեր հայրենիքի մարմին»⁶²: Սոցիալ-դարվինիզմը խորացրեց և «գիտականացրեց» այս տեսակետը՝ առաջ քաշելով այն մտայնությունը, որ եթե «ստորադաս» տարրերին հաջողությամբ չոչնչացնել, ապա կկատարվի այն, ինչ կատարվում է չարորակ ուռուցքի պարագայում. չարորակ բջիջները, բազմանալով մարդու ողջ մարմնում, ի վերջո ոչնչացնում են և՛ հյուրընկալ մարմինը, և՛ իրենք իրենց⁶³: Օսմանյան կայսրության թուրքական վերնախավի շրջանում ազգայնականության ծնունդով և սոցիալ-դարվինիզմի ազդեցությամբ ազգային փոքրամասնությունները սկսեցին դիտվել որպես «մանրէներ», «խոցեր», որոնք վտանգում են Օսմանյան կայսրության առողջությունը, հետևաբար նաև գոյությունը: Երիտթուրք գաղափարախոսներից Օմեր Սեյֆեդդինը իր գեղարվեստական կերպարներից մեկի՝ բուլղարացի երիտասարդ սպա Ռադկո Բակկանեսկու անունից հայտարարում էր. «...կոտորածը հասարակության դեղամիջոցն է»⁶⁴: Քանի որ բժշկական վիրահատության ժամանակ որոշ մանրէներ մարմնի մեջ թողնելը հանգեցնում է հիվանդի մահվանը, ապա, ըստ Սեյֆեդդինի, երկրում «օտար» բնակչություն թողնելը կուժեղացնի իշխողների հանդեպ նրանց բնական թշնամանքը և հնարավորություն կտա նրանց պատեհ առիթն օգտագործելով վրեժ լուծելու⁶⁵: Հատուկ կազմակերպության (Teşkilât-ı Mahsusa) ղեկավար Կուչուբաշի Էշրեֆը գտնում էր, որ ոչ մուսուլմանները «ներքին խոցեր» են, որոնց մաքրումը ազգային խնդիր է⁶⁶: Էնվերի բնորոշմամբ՝ հայերի տեղահանությամբ թուրքերը «կրկին կառողջանան և կմաքրվեն», հակառակ պարագայում կդադարեն գոյություն ունենալուց, ինչպես հիվանդ մարդն է մահանում հիվանդությունը չբուժելու հետևանքով⁶⁷: Օսմանյան խորհրդարանի պատգամավոր, ակնառու երիտթուրք գործիչ Միդհատ Շյուքրուն նույնպես արդարացնում էր Հայոց ցեղասպանությունը՝ որպես «հայերի վարակիչ հոգեկան հիվանդությունից» ազատվելու միջոց⁶⁸:

Նման բիոթոգանական և սոցիալ-դարվինիստական մոտեցումները հատուկ էին ոչ միայն երիտթուրքական վերնախավին, այլև պետական ու կուսակցական հիերարխիայի ցածր օղակներում գտնվողներին: Հայոց ցեղասպանության իրականացման մեխանիզմների ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդել, որ նպատակաուղղված սպանությունները բժիշկ պաշտոնյա-

62 Տե՛ս **Anderson B.**, *Imagined Communities: Reflections on the Origin and Spread of Nationalism*, London, New York: VERSO, 2006, էջ 103:

63 Տե՛ս **Chase A.**, *The Legacy of Malthus; The Social Costs of the New Scientific Racism*, New York, “Alfred Knopf”, 1980, էջ 349:

64 Տե՛ս **Ümit Kurt, Doğan Gürpınar**, *The Balkan Wars and the rise of the reactionary modernist utopia...*, էջ 356:

65 Տե՛ս նույն տեղում:

66 Տե՛ս **Akçam A. T.**, *A Shameful Act...*, էջ 92:

67 Տե՛ս **Bora Isyar**, *Ազգ. աշխ.*, էջ 357:

68 Տե՛ս **Kieser H.-L.**, *Talaat Pasha...*, էջ 22:

ների կողմից և բժշկական փորձարկումները հայ զոհերի վրա ևս տեղ են գտել, օրինակ՝ օսմանյան բանակի բժշկական կորպուսի պետ և սանիտարական ծառայությունների տեսուչ Սուլեյման Նումանը հրամայել է իր սանիտարական ջոկատին թունավորել էրզրումի, Սեբաստիայի և Երզնկայի հիվանդ բնակիչներին՝ «բնակչության առողջ զանգվածին հիվանդություններից և սովից պաշտպանելու»⁶⁹ պատրվակով: Կամ՝ Դիարբեքիի նահանգապետ Մեմեդ Ռեշիդը նահանգի հայությանը տեղահանելուց հետո՝ 1916 թ., տեղափոխվել է Անկարա՝ գործն այնտեղ շարունակելու համար: Միդիատ Շյուքրուին ուղղված նամակներից մեկում Ռեշիդը մեկնաբանում էր իր դիրքորոշումը. «Հայ դավաճանները սպաստան էին գտել իրենց համար հայրենիքի գրկում: Նրանք վտանգավոր մանրէներ էին: Արդյոք բժշկի պա՞րտքը չէ ոչնչացնել այդ մանրէները: Կամ՝ հայերը կոչնչացնեին թուրքերին և կդառնային այս հողի սեփականատերերը, կամ՝ կոչնչացվեին թուրքերի կողմից:Իմ թուրքականությունը գերիշխեց իմ բժշկի կոչմանը»⁷⁰:

Տրապիզոնի Հանրային առողջապահության և սանիտարական ծառայությունների տնօրեն Ալի Սայիբի հրահանգով նահանգի հազարավոր հայ նորածինների, հղի կանանց և տարեցների Կարմիր մահիկի հիվանդանոցում սպանել են թույնի ներարկմամբ⁷¹: Վիրաբույժ Հայդար Ջեմալի վկայությամբ՝ 1916 թ. հունվարին, երբ տիֆի համաճարակ էր տարածվել, Երզնկայում տեղահանության ենթակա հայերին կենտրոնական հիվանդանոցում ներարկում էին տիֆով վարակվածների արյուն՝ փորձարկումների նպատակով: Ջեմալը, նշելով, որ փորձի ենթարկվածները մահացել են, փաստում է. «....սա սովորական երևույթ էր թուրքական իշխանությունների համար»⁷²: Փորձարկման արդյունքները պրոֆեսոր Հանդի Սուադը հրապարակել է գինվորական բժշկական մի պարբերաթերթում՝ նշելով, որ փորձարկումները կատարվել են մահապարտների վրա: Նույնը փաստում է թուրք մեկ այլ բժիշկ՝ նշելով, որ թեև «....կենդանիի մը չափ անգամ արժեք չունեցող խեղճ հայերը գիտութան մթին կետերը լուսաորելու համար զոհուած են»⁷³, այնուամենայնիվ, այդ փորձարկումների գիտական արդյունքի հավանականությունը խիստ կասկածելի է:

69 Dadrrian N. V., The Role of Turkish Physicians in the World War I Genocide of Ottoman Armenians, "Holocaust and Genocide Studies", 1986, 1:2, էջ 174:

70 Kieser H.-L., Dr. Mehmed Reshid (1873-1919): A Political Doctor// Der Völkermord an den Armeniern und die Shoah, eds. Kieser H., Schaller D., Zurich, "Chronos", 2002, p. 262. Հոդվածի նախաբանում Հանս Լուկաս Կիզերը նաև նշում է, որ թուրքական ժամանակակից պատմագրության մեջ կա Ռեշիդին իր տեսակի մեջ եզակի և ծայրահեղական ներկայացնելու միտում: Սակայն, ուսումնասիրելով նրա ընտանեկան արխիվը, ժամանակակիցների վկայությունները, Կիզերը հանգել է այն եզրակացությանը, որ Ռեշիդը սովորական «տիպիկ» գործիչ էր պատերազմական շրջանի երիտթուրքական վերնախավում: Ավելին՝ նա նաև բերում է Միդիատ Շյուքրուի՝ այդ ընթացքում կուսակցության գլխավոր քարտուղարի խոսքերն այն մասին, որ կուսակցության բազմաթիվ անդամներ պաշտպանում էին Դիարբեքիի վալիի գաղափարները, սակայն 1918 թ. զինադադարից հետո փոխեցին իրենց դիրքորոշումը դատարանից խուսափելու համար (տե՛ս նույն տեղում, էջ 245):

71 Տե՛ս Միդիատ Նորայր, Թուրք բժիշկներն ալ մեղակից, «Արիամարտ», Կ. Պոլիս, 1918, N 21, էջ 1: 1919 թ. Տրապիզոնի դատավարության ընթացքում Ալի Սայիբի դատի մանրամասները տե՛ս Dadrrian N. V., Akçam T., Judgment at Istanbul: the Armenian Genocide Trials, New York and Oxford, "Berghahn Books", 2011, էջ 111-113, 218, 220:

72 Ժեմալ Հայտար, Թուրք բժիշկներու մեղակցութիւնը, «Արիամարտ», 1918, N 30, էջ 2:

73 Տօքթ. Սէլահիտտին, Թուրք բժիշկներու մեղակցութեան խնդիրը, «Արիամարտ», 1918, N 31, էջ 2:

Շեռաքրքրական է կրոնի և սոցիալ-դարվինիզմի փոխհարաբերությունը երիտթուրքերի աշխարհայացքում: Իր բնույթով սոցիալ-դարվինիզմը հակակրոնական է: Ընդունելով բնության օրենքների բացարձակ տարածումը մարդկային հասարակության վրա և մարդուն կենսաբանական աշխարհից չզատելով՝ այն դեմ է և՛ քրիստոնեությանը, և՛ իսլամին: Իրենց հերթին երիտթուրք քաղաքական գործիչները իսլամն ու շարիաթն ընդունում էին վերապահումներով՝ կարևորելով դրանք կայսրության ավանդական հիմքերը չխախտելու և ամբողջին կառավարելու առումով: Դիպուկ է նրանց ժամանակակից ռուս լրագրողի՝ երիտթուրքերի՝ իսլամի նկատմամբ ունեցած ստեղծության համեմատությունը կաթոլիկ եկեղեցու հանդեպ Վոլտերի ունեցած վերաբերմունքի հետ⁷⁴: Փիլիսոփայական ուսմունքով պայմանավորված՝ աղավաղվում էին նաև բարոյականության վերաբերյալ նրանց պատկերացումները: Թուրքական ազգայնականությունը քարոզող «Գենչ քալեմլեր» պարբերականը 1911 թ. մի խմբագրական հոդվածով ինտերնացիոնալիզմը և մարդկայնությունը հռչակում էր հայրենիքի համար դեստրուկտիվ կոնցեպտներ⁷⁵:

Սոցիալ-դարվինիզմում, կրոնից բացի, տեղ չունեն նաև անհատի կյանքը և անհատական կամքը: Մարդը՝ որպես տեսակ, այլևս արժեք չունի, որովհետև կյանքը որպես գոյության կռվի դաշտ է դիտվում որոշակի նկարագիր և մշակութային ինքնություն ունեցող մարդկանց խմբերի միջև⁷⁶: 1909 թ. հեղաշրջման փորձը ճնշելուց հետո «Թանին»-ի խմբագիր Հյուսեյն Ջահիդը, որն իրեն համարում էր եվրոպական հումանիզմի աշակերտ, առաջարկել է գլխատել նախկին վարչակարգի բոլոր գործիչներին: Երբ եվրոպացի մի խումբ լրագրողներ քննարկել են մահապատժի անթույլատրելիությունն առհասարակ, նա հակադարձել է. «Ինչո՞ւ եք այդքան դեմ մահապատժին: Ամեն դեպքում կան պահեր, երբ առանց դրա հնարավոր չէ: Եվ ավելի լավ է արդյոք մարդուն երկար ժամանակով բանտ ստեցնելը: Միանգամից սպանելն ավելի հեշտ է»⁷⁷:

Գյոքալփի գրվածքներում մարդու անհատական իրավունքները ստորադասվում են պետության շահին: 1915 թ. գրված «Vazife» (պարտք, պարտականություն) բանաստեղծության մեջ նա նշում է. «Չունեն իրավունք, շահ և ցանկություն, միայն պարտականություն և չունեն կարիք այլ բանի: Աչքերս փակում են, պարտքս կատարում են»⁷⁸: Դյուրկհայմյան սոցիոլոգիայի ազդեցությամբ⁷⁹ Օսմանյան կայսրության սոցիալական կյանքի քննությունը Գյոքալփի գրվածքներում առավել ծայրահեղ էր դառնում: Դյուրկհայմի պնդմամբ՝ միակ հաստատուն ուժը, որը միավորում է հասարակության բոլոր անդամներին և անկախ է

74 Стів Търкова А., Старая Турция и младотурки: годъ въ Константинополе, Петроградъ, тип. Б. М. Вольфа, 1916, էջ 137:

75 Стів Акçam А. Т., A Shameful Act..., էջ 81:

76 Стів Stein G., Biological science and the roots of Nazism, "American Scientist", 1988, N 76 (1), էջ 53:

77 Търкова А., указ. соч., с. 116.

78 Safarian Al., Ziya Gökalp on National Education, Iran & the Caucasus, 2004, Vol. 8, No. 2, p. 226.

79 Стів Edib H., նշվ. աշխ., էջ 319, Սաֆարյան Ա., Զիյա Գյոքալփը և «Թյուրքականության հիմունքները», Եր., ԵԴՀ հրատ., 2012, էջ 162:

անհատների կամքից, սոցիալական գիտակցությունն է (social consciousness): Սակայն Գյոքալփը, փոխառելով այս գաղափարը, նշում է, որ սոցիալական գիտակցությունը հասարակության ոչ թե մտածողության, այլ զգացմունքների խտացումն է⁸⁰: Հետևաբար, երբ ազգին վտանգ է սպառնում, անհատներն այն չեն կարող փրկել: Ազգն ինքն է դառնում իր փրկիչը. ինքնասերին դարձնելով անձնագոհ, իսկ վախկոտին՝ հերոս, տալիս է հիմարին խելք, իսկ ծուլին՝ ջանք⁸¹: Բարոյականությունը քննելիս Գյոքալփը կրկին դիմում է Դյուրկհայմի փիլիսոփայությանը՝ ամբողջությամբ վերցնելով վերջինիս սահմանումը. «Այն, ինչ հավաքական խիղճն ընդունում է, սովորական է, այն, ինչ մերժում է, պաթոլոգիական»⁸²: Հասարակության բոլոր հատկանիշները նա վերագրում է ազգին, իսկ Աստծո հանդեպ հավատքը փոխարինում ազգի հանդեպ հավատքով: Թուրքիզը Գյոքալփի, նրա ազդեցությամբ նաև երիտթուրք մի շարք գործիչների մոտ դառնում է պաշտամունքի նոր առարկա⁸³: «Հասարակությունն անում է այն, ինչ ցանկանում է» դյուրկհայմյան կոնցեպտին հետևելով՝ Գյոքալփը պնդում է, որ եթե ազգը վտանգ է զգում, ապա այն հաղթահարելու գործողությունների համար բարոյական պատասխանատվություն չի կրում⁸⁴: Այս գաղափարը պաշտպանում էին երիտթուրք բոլոր քաղաքական գործիչները: Նմանապես և Մեհմեդ Ռեշիդը իր նամակներից մեկում գրում էր, որ իրեն չեն հետաքրքրում պատմական պատասխանատվությունը և այն, թե օտարազգի պատմաբաններն իր մասին ապագայում ինչ կգրեն⁸⁵:

Առաջին համաշխարհային պատերազմում «ամենահարմարվածի գոյատևման» գաղափարի տարածումով երիտթուրքերի գործողություններն աջակցություն էին գտնում: Գերմանացի ծովային կցորդ Հանս Հումանը 1915 թ. առհասարակ հայտարարել է. «Կյանքիս մեծ մասն ապրել եմ Թուրքիայում, և ես գիտեմ հայերին: Ես նաև գիտեմ, որ հայերը և թուրքերը այս երկրում միասին ապրել չեն կարող: Այս ռասաներից մեկը պետք է հեռանա: Եվ ես չեմ մեղադրում թուրքերին այն բանի համար, թե նրանք ինչ են անում հայերի հետ: Կարծում եմ՝ նրանք լիովին արդարացի են. ավելի թույլ ազգը պետք է մեռնի»⁸⁶: Ընդհանուր առմամբ իշխում էր այն համոզմունքը, որ ձյնարտությունն ուժեղի կողմն է, և հաղթելուց հետո այլևս կարևոր չէ, թե իրենց արարքներն ինչ արձագանքի կարժանանան: Ինչպես Թալաթըն է եզրակացնում, քանի դեռ ազգն անում է առավելագույնը՝ իր շահի համար, և հաջողում է, աշխարհը հիանում է դրանով և դա բարոյական համարում⁸⁷:

80 Տե՛ս Durkheim E., The Division of Labor in Society, The Macmillan Press, 1984, էջ 40, Heyd U., նշվ. աշխ., էջ 52:

81 Տե՛ս Gökalp Z., Turkish Nationalism and Western Civilization, ed. Niyazi Berkes, New York, "Columbia University Press", 1959, էջ 68:

82 Նույն տեղում, էջ 22:

83 Տե՛ս Heyd U., նշվ. աշխ., էջ 57:

84 Տե՛ս Akçam A. T., A Shameful Act..., էջ 89:

85 Տե՛ս Dadrian N. V., նշվ. աշխ., էջ 175:

86 Morgenthau H., op. cit., p. 375.

87 Տե՛ս Edib H., նշվ. աշխ., էջ 387:

Ռեգինա Ա. Գալուստյան – հեղինակ է մեկ տասնյակից ավելի հոդվածների: Հետազոտման հիմնական թեման Հայոց ցեղասպանությունն է թուրքական ազգայնականության համատեքստում, գիտական հետաքրքրությունների շրջանակը ներառում է նաև ազգայնականությունը, ազգաստեղծման և պետականաստեղծման ծրագրերը, էթնիկ գտումները և ցեղասպանությունները:

Էլեկտրոնային հասցե՝ galustyanra@gmail.com

Summary

SOCIAL-DARWINISM IN YOUNG TURK MINDSET

Regina A. Galustyan

Key words - Young Turks, social-Darwinism, “struggle for survival”, “survival of the fittest”, internal enemy, “nation in arms”, Armenian Genocide, war, “cancer”, morality, medical experiments.

A few Armenian and foreign researchers have mentioned the existence of social-Darwinism in the mainstream of the ideology of the Committee of Union and Progress (Young Turks). The aim of this article is to develop further this idea, mainly to show the possible ways social-Darwinism was implanted in the Young Turk nationalist ideology and its further manifestations. The article demonstrates that although not all high-ranking party members followed the philosophical school of Herbert Spencer, the main concept of the “survival of the fittest” was accepted by many Young Turk politicians at different levels of the party hierarchy.

In compliance with their social-Darwinist mindset, they saw war as a significant and inevitable stage in the development of the nation. Many politicians, including Mehmed Taalat, the Minister of Interior, saw the war as an opportunity to change the demographic, economic, foreign, and inner political situation of the empire. The government internalized Italo-Turkish (1911-1912), the Balkan wars (1912-1913), and World War I (1914-1918) to start a war against the Christian citizens of the empire, who were declared as “inner enemies” and “ulcers on the body of the state” endangering its existence. As a long-term goal this policy aimed at clearing the land from the non-assimilated national minorities, homogenizing the population, and establishing a national economy and a Turkish nation-state.

In the second part of the article, the intersection of the two ideas of social-Darwinism and Organicism is discussed. The basis of this philosophy is the belief that the laws of natural sciences identically operate in human society. From here derives the analogy of society and a living organism, and the conclusion that the healthier organism will win the struggle for existence. Starting from the Balkan Wars we encounter organicist terminology in Young Turk periodicals and in the lexicon of the party ideologues. With the outbreak of WWI and during the Armenian Genocide the medical justification of the killing took place, as according to the social-Darwinist mindset, the destruction of maladapted species is considered natural. In this ideological context the direct involvement in the killings of the Turkish doctors, and medical experiments on the Armenian victims are brought as an example.

In the end, the article attempts to analyze the relations of religion and social-Darwinism in Young Turks' mindset, as well as their perception of morality.

Резюме

СОЦИАЛ-ДАРВИНИЗМ В МИРОВОЗЗРЕНИИ МЛАДОТУРОК

Регина А. Галустян

Ключевые слова - младотурки, социал-дарвинизм, «борьба за выживание», «выживание наиболее приспособленных», внутренний враг, «вооруженная нация», Геноцид армян, война, «опухоль», мораль, медицинские эксперименты.

Некоторые армянские и зарубежные исследователи упомянули о существовании социал-дарвинизма в основной идеологии комитета «Единение и прогресс» (младотурки). Целью данной статьи является дальнейшее развитие этой идеи, в частности, исследование возможных способов внедрения социал-дарвинизма в младотурецкую националистическую идеологию и ее дальнейшие проявления. В статье показано, что хотя не все высокопоставленные члены партии следовали философской школе Герберта Спенсера, основной принцип «выживание наиболее приспособленных» был принят многими младотурецкими политиками на разных уровнях партийной иерархии.

В соответствии со своим социал-дарвинистским мировоззрением, младотурки рассматривали войну как важный и неизбежный этап в развитии нации. Многие политики, в том числе министр внутренних дел Мехмед Талаат, считали вой-

ну возможностью изменить демографическую, экономическую, внешнюю и внутривластическую ситуацию империи. Правительство интернализировало ита-ло-турецкие (1911-1912), балканские войны (1912-1913) и Первую мировую войну (1914-1918), чтобы вести войну против христианских граждан империи, которые были объявлены «внутренними врагами» и «язвами на теле государства», угрожающими его существованию. В качестве долгосрочной цели эта политика была направлена на очищение территории от неассимилированных национальных меньшинств, гомогенизацию населения и создание национальной экономики и турецкого национального государства.

Во второй части статьи обсуждается пересечение двух идей социал-дарвинизма и органицизма. В основе этой философии лежит вера в то, что законы естественных наук одинаково действуют в человеческом обществе, которое сравнивается с живым организмом. Отсюда вытекает аналогия общества и живого организма и вывод о том, что более здоровый организм победит в борьбе за существование. Начиная с балканских войн, мы встречаем терминологию органицизма в младотурецкой периодической прессе и в лексике партийных идеологов. Уже с началом Первой мировой войны и во время Геноцида армян произошло оправдание убийств с медицинской точки зрения, так как согласно социал-дарвинистскому мышлению, уничтожение неадаптированных видов считается естественным. В этом идеологическом контексте в качестве примера приводится прямое участие турецких врачей в убийствах и медицинские эксперименты над армянами.

В конце статьи предпринята попытка проанализировать отношения религии и социал-дарвинизма в мировоззрении младотурок, а также их восприятие морали.

REFERENCES

1. **Avakjan A.**, Genocid armjan: mexanizmy prinjatija I ispolnenija reshenij, Jer., MIGA, 2013 **(In Russian)**.
2. **Chēmal Haytar**, T'urk' bzhishkneri meghsakts'ut'iwně, "Ariamart", K. Polis, 1918, N 30 **(In Armenian)**.
3. **Gobino Zh. A.**, Opyt o neravenstve chelovecheskix ras, M., "Odissej", "OIMA-PRESS", 2001 **(In Russian)**.
4. **Gofman A. B.**, Elitizm I rasizm (kritika filosofsko-istoricheskix vozzrenij A. De. Gobino), "Rasy I narody", M., 1977, vyp. 7 **(In Russian)**.
5. **Khudinyan G.**, HY Dashnakts'ut'yan k'nnakan patmut'yun (akunk'nerits' minch'ev 1895 t'vakani verjerě), Yer., hrat. HY ashnakts'ut'yan, 2006 **(In Armenian)**.
6. **Mak's Nordau**, "Chakatamart", Kostandnupolis, 1923, N 3116 **(In Armenian)**.
7. **Mihran Norayr**, T'urk' bzhishknern al meghsakits', "Ariamart", K. Polis, 1918, N 21 **(In Armenian)**.
8. **P'ap'azean V.**, Im yusherě, hator yerkrord, Pēyrut', Tparan Hamazgayin ēnkerut'ean, 1952 **(In Armenian)**.
9. **Safaryan Al.**, Ziya Gyok'alp'ě yev "T'yurk'akanut'yan himunk'nerě", Yer., YePH hrat., 2012 **(In Armenian)**.
10. **Tök't'. Sēlahētīn**, T'urk' bzhishkneru meghsakts'ut'ean khndirě, "Ariamart", K. Polis, 1918, N 31 **(In Armenian)**.
11. **Tyrkova A.**, Staraja Turcija I mladoturki: god v Konstantinopole, Petrograd, tip. B. M. Vol'fa, 1916 **(In Russian)**.